ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դեկտեմբեր, 2025

Բովանդակություն

Բովանդակություն 1

Ֆինանսական դիրք 2

Վարկային պորտֆել և համեմատականներ 3

Տրամադրված վարկերի ծավալը 3

Տրամադրված վարկերի քանակը 3

Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ 5

Վարկերի կառավարում 6

Վերլուծական գործակիցներ 7

Ֆինանսական դիրք

- **Ակտիվներ:** ՀՀ ՎԿԱ անդամների համախառն ակտիվները 2025թ.-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 259.11 մլրդ դրամ՝ 2024թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճելով 16.2%-ով, իսկ 2025թ.-ի Նոյեմբերի նկատմամբ՝ 1.7%-ով: (Գծ.1):
- **Վարկային Պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը 2025թ.-ի Դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 203.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա Դեկտեմբերի նկատմամբ աճելով 17.2%-ով, իսկ 2025թ. Նոյեմբերի նկատմամբ՝ 3.4% (Գծ.1):
- **Կապիտալ:** ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալը 2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 86.57 մլրդ դրամ՝ 2024թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճելով 9.1%-ով, իսկ 2025թ.-ի Նոյեմբերի նկատմամբ նվազելով 2.8%-ով (Գծ.1):

Գծապատկեր 1. ՀՀ ՎԿԱ անդամների ֆինանսական դիրքը 2024-2025թթ. Դեկտեմբերի վերջի դրությամբ



Վարկային պորտֆել և համեմատականներ

Տրամադրված վարկերի ծավալը

- 2025թ.-ի Դեկտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 22.17 մլրդ դրամի վարկ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 21.9%-ով, իսկ 2025թ.-ի Նոյեմբերի նկատմամբ աճել է 28.0%-ով (Գծ. 2):

Գծապատկեր 2. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024 և 2025 թթ.-երի Հունվար-Դեկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի ծավալը



Տրամադրված վարկերի քանակը

- 2025թ.-ի Դեկտեմբեր ամսին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրվել է 67,326 վարկ, որը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 10.2%-ով, իսկ 2024թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ՝ 9.7%-ով (Գծ. 3):

- 2025թ.-ի Դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամներն ունեցել են 218,714 ակտիվ վարկառուներ: Ակտիվ վարկառուների քանակը 2024թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճել է 6.9%-ով, իսկ 2025թ.-ի Նոյեմբերի նկատմամբ նվազել է 1.3%-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2025թ.-ի Դեկտեմբերին տրամադրված վարկերի միջին մեծությունը կազմել է 329 հազար դրամ, իսկ վարկային պորտֆելի միջին վարկի մեծությունը կազմել է 928 հազար դրամ: Նույն ցուցանիշները 2024թ.-ի Դեկտեմբերին կազմել են համապատասխանաբար՝ 296 և 846-հազարական դրամ (Գծ. 4):

Գծապատկեր 3. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից 2024 և 2025 թթ.-երի Հունվար-Դեկտեմբեր ամիսներին տրամադրված վարկերի քանակը



Գծապատկեր 4. ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի միջին մեծություն



Մասնաճյուղեր և վարկային պորտֆելի ցուցանիշներ

- 2025թ.-ի Դեկտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամները միասին վերցրած ՀՀ ամբողջ տարածքում ունեցել են 159 մասնաճյուղ, որը, համեմատած 2024թ.-ի Դեկտեմբերի հետ, աճել է 8-ով:
- ՀՀ ՎԿԱ անդամները 2025թ.-ի Դեկտեմբերի դրությամբ ունեցել են 449 վարկային մասնագետ, որը, համեմատած 2024թ.-ի Դեկտեմբերի հետ, աճել է 27-ով:
- 2025թ.-ի Դեկտեմբերին ՀՀ ՎԿԱ անդամների կողմից տրամադրված վարկերի գծով մեկ վարկային մասնագետի հաշվով միջին վարկի մեծությունը կազմել է 49.37 մլն դրամ, նախորդ ամսին՝ 39.18 մլն դրամ, իսկ 2024թ.-ի Դեկտեմբերին այս ցուցանիշը կազմել է ևս 43.09 մլն դրամ (Գծ. 5):
- 2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով կազմել է 452.13 մլն դրամ, նախորդ ամսվա 444.21 մլն դրամի և 2024թ.-ի Դեկտեմբերին 410.34 մլն դրամի համեմատ (Գծ. 5):

Գծապատկեր 5. ՀՀ ՎԿԱ անդամների տրամադրված միջին վարկը և վարկային պորտֆելը մեկ վարկային մասնագետի հաշվով



Վարկերի կառավարում

- **Մինչև 30 օր ժամկետանց պորտֆել:** ՀՀ ՎԿԱ անդամների մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը 2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1,340 մլն դրամ, նախորդ ամիս՝ 2,127 մլն դրամ և 2024թ.-ի Դեկտեմբերին՝ 1,990 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի ծավալը նվազել է 32.7%-ով, իսկ 2025թ.-ի Նոյեմբերի նկատմամբ նվազել է 37.0%-ով: 2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ մինչև 30 օր ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 0.66%-ը, 2024թ.-ի Դեկտեմբերին ևս կազմել է 1.15% (Գծ. 6):
- **Ժամկետանց պորտֆել 30 օրից ավել:** ՀՀ ՎԿԱ անդամների 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը 2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 3,411 մլն դրամ, նախորդ ամիս՝ 4,231 մլն դրամ և 2024 թ.-ի Դեկտեմբերին՝2,707 մլն դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի ծավալը աճել է 26.0%-ով, իսկ 2025թ.-ի Նոյեմբերի նկատմամբ նվազել է 19.4%-ով:

2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ 30 օրից ավել ժամկետանց վարկերի պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 1.68%-ը, 2024թ.-ի Դեկտեմբերին՝ 1.56% (Գծ. 6):

- **Զուտ դուրսգրումներ:** 2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է 1,847 մլն դրամ, նախորդ ամիս՝ 1,461 մլն դրամ և 2024թ.-ի Դեկտեմբերին՝ 865 մլն դրամ: Զուտ դուրս գրված վարկերի ծավալը 2025թ.-ի Դեկտեմբերին նախորդ ամսվա նկատմամբ աճել է 26.4%-ով, իսկ 2024թ.-ի Դեկտեմբերի նկատմամբ աճել է 113.6%-ով: Ասոցիացիայի անդամների սույն թվականի Դեկտեմբերի զուտ դուրս գրված վարկերի ծավալը կազմել է համախառն վարկային պորտֆելի 0.91%-ը, նախորդ ամիս՝ 0.74% և 2024թ.-ի Դեկտեմբերին 0.50% (Գծ. 6):

Գծապատկեր 6. ՀՀ ՎԿԱ անդամների վարկերի ծավալները Դեկտեմբերի 31-ի դրությամբ



Վերլուծական գործակիցներ

- 2025թ.-ի Դեկտեմբերի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համախառն վարկային պորտֆելի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 78.3%, որը վկայում է այն մասին, որ ակտիվների ծանրակշիռ մեծամասնությունը ուղղվում է վարկավորմանը: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Դեկտեմբերին կազմել է 77.7% (Գծ. 7):

- Սույն թվականի Դեկտեմբերի դրությամբ Ասոցիացիայի անդամների ընդհանուր կապիտալի և վարկային պորտֆելի հարաբերակցությունը կազմել է 42.6%: Այս ցուցանիշը ցույց է տալիս, որ Ասոցիացիայի անդամների վարկավորման ծավալի 43%-ը իրականացվում է սեփական կապիտալի հաշվին: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Դեկտեմբերին կազմել է 45.8% (Գծ. 7):
- 2025թ.-ի Դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների ընդհանուր կապիտալի և ակտիվների հարաբերակցությունը կազմել է 33.4%, որը վկայում է Ասոցիացիայի անդամ վարկային կազմակերպությունների բարձր կապիտալիզացիայի մասին: Նույն ցուցանիշը 2024թ.-ի Դեկտեմբերին կազմել է 35.6% (Գծ. 7):
- Ընդհանուր պարտավորությունների և կապիտալի հարաբերակցության ցուցանիշը ցույց է տալիս միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունների չափը: Այս ցուցանիշը ցույց է տալիս նաև վարկային բիզնեսի կառավարման արդյունավետության մակարդակը: 2025թ.-ի Դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ ՎԿԱ անդամների համար այս գործակիցը կազմել է 1.99, այսինքն միավոր կապիտալի դիմաց ունեցած պարտավորությունները 2.0 անգամ գերազանցել է կապիտալի մակարդակը: Նույն ցուցանիշը նախորդ տարվա Դեկտեմբերի համար կազմել է 1.81:

Գծապատկեր 7. ՀՀ ՎԿԱ անդամների վերլուծական գործակիցներ




Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն ու քանակությունը
61,378
56,101
58,587
66,270
63,043
63,633
60,686
58,074
54,881
55,741
60,283
61,106
67,326
Dec-24
Jan-25
Feb-25
Mar-25
Apr-25
May-25
Jun-25
Jul-25
Aug-25
Sep-25
Oct-25
Nov-25
Dec-25


Ժամկետանց վարկերի դինամիկան 12/2024-12/2025
PAR 1-30 days
PAR more than 30 days
5,000,000
4,000,000
3,000,000
2,000,000
1,000,000
-
Dec-24
Jan-25
Feb-25
Mar-25
Apr-25
May-25
Jun-25
Jul-25
Aug-25
Sep-25
Oct-25
Nov-25
Dec-25